ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԱԺԽՈ-50-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով և «Ազգային ժողովի խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» 2017 թվականի մայիսի 26-ի թիվ 1 որոշման 9-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է.**

1. «Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկը հաստատելու մասին» Ազգային ժողովի խորհրդի 2026 թվականի հոկտեմբերի 5-ի ԱԺԽՈ-50-Լ որոշման հավելվածում՝

1) 3-րդ կետում «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի պարտականությունները կատարող Ռոբերտ Բազիկյան,» բառերը հանել և նույն կետում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյան,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի պարտականությունները կատարող Ռոբերտ Բազիկյան:» բառերը.

2) 8-րդ կետում «Գեղամ Գևորգյան» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի նախագահ Ներսես Երիցյան:» բառերը.

3) 9-րդ կետում «10:00» թվերը փոխարինել «12:30» թվերով.

4) 10-րդ կետում «16:30» թվերը փոխարինել «10:00» թվերով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ռ. ՌՈՒԲԻՆՅԱՆ**

2026 թվական, հոկտեմբերի 26
Երևան
ԱԺԽՈ-57- Լ

ՀԱՎԵԼՎԱԾ
Ազգային ժողովի խորհրդի
2026 թվականի հոկտեմբերի 5-ի
N ԱԺԽՈ-50-Լ որոշման

(2026 թվականի հոկտեմբերի 26-ի

ԱԺԽՈ-57-Լ որոշման փոփոխություններով)

Ժամկետացանկ

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու

1. Երկուշաբթի, 2 նոյեմբերի 2026թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկում.
   - օրենքի նախագծի մշակման սկզբունքները և նախագծի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (գնաճի սցենարը, բյուջեի դեֆիցիտը և նրա ծածկույթը, արտաքին և ներքին պարտքը),
   - եկամուտների ձևավորում (հարկային և մաքսային քաղաքականությունը),
   - բյուջեի ծախսերի կառուցվածքը և ծախսային քաղաքականությունը (սոցիալական հարցերի լուծումը բյուջեում և դոտացիաներ համայնքներին),
   - բյուջեի կատարման համար անհրաժեշտ օրենսդրական ապահովումը.
2. «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ ֆինանսների նախարարություն.
3. «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կենտրոնական բանկի եզրակացության քննարկում.
4. Կենտրոնական բանկի 2027թ. վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նախագծի քննարկում:
5. «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ Հաշվեքննիչ պալատ:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան,
- Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահ Ատոմ Ջանջուղազյան,
- Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդուարդ Հակոբյան:

Հրավիրվում են՝

- Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը,
- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարար Արսեն Թորոսյանը,
- Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյանը:

2. Երկուշաբթի, 2 նոյեմբերի 2026թ., ժ.15:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի աշխատանքի և բարեկեցության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ աշխատանք, սոցիալական ապահովություն, նպաստներ և թոշակներ:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարար Արսեն Թորոսյան:

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը*

3. Երեքշաբթի, 3 նոյեմբերի 2026թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ իշխանության պետական և դատական մարմիններ, պետական վերահսկողություն և կոռուպցիայի կանխարգելում:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար Լիլիթ Մակունց,
- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Սրբուհի Գալյան,
- Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Խաչատուր Պողոսյան,
- Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար Դավիթ Համբարյան,
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Արմեն Հարությունյան,
- Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդ՝Դատական դեպարտամենտի ղեկավար Նաիրի Գալստյան,
- Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղար Միեր Ափրիկյան,
- Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյան,
- Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյան,
- Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Արթուր Նահապետյան,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյան,
- Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի պարտականությունները կատարող Ռոբերտ Բազիկյան:

Հրավիրվում են՝ *Կառավարությանը ենթակա՝ տեսչական մարմինների ղեկավարները*

4. Երեքշաբթի, 3 նոյեմբերի 2026թ., ժ.16:30, 334 դահլիճ

Ազգային ժողովի առողջապահության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ առողջապահություն:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան:

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը*

5. Չորեքշաբթի, 4 նոյեմբերի 2026թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ ներքին գործեր:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյան:

5.1. Չորեքշաբթի, 4 նոյեմբերի 2026թ., ժ.12:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ (նիստը դռնփակ է)

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ պաշտպանություն, ազգային անվտանգության ծառայություն, պետական պահպանության ծառայություն, արտաքին հետախուզության ծառայություն, պետական ռեզերվներ:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյան,
- Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյան,

- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրեն Անդրանիկ Սիմոնյան,
- Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարար Դավիթ Թադևոսյան,
- Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետ Արթուր Գասպարյան,
- Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայության պետ Քրիստիննե Գրիգորյան:

6. Հինգշաբթի, 5 նոյեմբերի 2026թ., ժ.10:00, 334 դահլիճ

Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների, տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի, եվրոպական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արտաքին գործեր և միջազգային առևտուր, միջազգային կազմակերպություններին անդամակցելու վճարումներ:

2. «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ եվրասիական տնտեսական միություն և տարածաշրջանի երկրների հետ կապեր:

3. «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ եվրոպական ինտեգրում:

Զեկուցողներ՝
- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարար Արարատ Միրզոյան,
- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյան:

7. Հինգշաբթի, 05 նոյեմբեր 2026թ., ժ.16:30, 334 դահլիճ
Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և սփյուռքի հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ կրթություն, գիտություն, մշակույթ, սպորտ, սփյուռք, երիտասարդություն և տեղեկատվություն:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան,
- Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տիգրան Հակոբյան,
- Հայաստանի Հանրապետության հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ Վասակ Դարբինյան,
- Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյան:

Հրավիրվում են՝

- *ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող Արտուր Մովսիսյանը,*
- *Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:*

8. Ուրբաթ, 6 նոյեմբերի 2026թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, քաղաքաշինություն, կապ, հեռահաղորդակցություն, ինտերնետ, արտադրական ենթակառուցվածքի այլ ճյուղեր, զբոսաշրջություն, առևտուր և ծառայություններ, ձեռնարկատիրական գործունեություն, սակագներ, ներդրումներ, տնտեսական մրցակցություն, հակամենաշնորհ և անշարժ գույքի կադաստրի ոլորտ:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյան,
- Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և արհեստական բանականության նախարար Դավիթ Թադևոսյան,
- Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյան,
- Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյան,
- Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյան,
- Հայաստանի Հանրապետության մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գևորգյան,
- Հայաստանի Հանրապետության տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի նախագահ Ներսես Երիցյան:

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը*

9. Երկուշաբթի, 9 նոյեմբերի 2026թ., ժ.12:30, 334 դահլիճ
Ազգային ժողովի տարածքային կառավարման և շրջակա միջավայրի պահպանության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ տարածքային կառավարում, տարածքային զարգացում, էներգետիկա, տրանսպորտ, բնական պաշարներ, պետական գույքի կառավարում, շրջակա միջավայրի պահպանություն, դոտացիաներ համայնքներին և պատվիրակված լիազորությունների իրականացում:

Զեկուցողներ՝
- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյան,
- Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթևոսյան,
- Հայաստանի Հանրապետության մարզպետներ և Երևանի քաղաքապետ:

10. Երկուշաբթի, 9 նոյեմբերի 2026թ., ժ.10:00, 334 դահլիճ
Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ:

Զեկուցողներ՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան,
- Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյան:

11. Մինչև 2026 թվականի նոյեմբերի 11-ը՝ ժամը 18:00-ն.

1. **Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկումների ամփոփում:**
2. **Ազգային ժողովի պատգամավորները և խմբակցությունները «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկները ներկայացնում են ԱԺ աշխատակազմ:**

12. Մինչև 2026 թվականի նոյեմբերի 12-ը՝ ժամը 15:00-ն

Ազգային ժողովի աշխատակազմը՝ ԱԺ մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկումների արդյունքում ստացած գրավոր առաջարկները ներկայացնում է Կառավարություն:

13. Երեքշաբթի, 2026 թվականի նոյեմբերի 17-ին.

«Հայաստանի Հանրապետության 2027թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը ընդգրկվում է Ազգային ժողովի իններորդ գումարման երկրորդ նստաշրջանի նոյեմբերի 17-ին գումարվող հերթական նիստերի օրակարգում:

Ազգային ժողովի աշխատակազմի

ղեկավար-գլխավոր քարտուղար Դ. Համբարյան